

ՄԻՔԱՅՆԵԼ ՆԱԽԱՆԳՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԸ

Հայ ժողովուրդը Սովետական Միության մյուս ժողովուրդների հետ միասին հանդիսավորությամբ նշեց իր պանծալի զավակի՝ գրող ու ֆենադատ, գեղագետ ու լեզվաբան, տնտեսագետ ու հասարակական-ֆալսական գործիչ, մեծ հեղափոխական-դեմոկրատ Միֆայել Նալբանդյանի ծննդյան 150-ամյա հոբելյանը: Երևանի պետական համալսարանում նոյեմբերի 12—14-ը կայացավ հոբելյանական գիտական նստաշրջան, որը բազմակողմանիորեն բնութագրեց Մ. Նալբանդյանի կյանքը, գրական, գիտական ու հասարակական-ֆալսական գործունեությունը:

Բացելով նստաշրջանը՝ համալսարանի ուսուցող, ակադեմիկոս Ս. Համբարձումյանն ասաց.

— Հարգելի ընկերներ, լրանում է հայ հեղափոխական-դեմոկրատական մտքի և ազգային ազատագրական շարժման առաջնորդ, մարտնչող հեղափոխական, հայկական բրենդատական ռեալիզմի հիմնադիր, տաղանդավոր գրող և հրապարակախոս Միֆայել Նալբանդյանի ծննդյան 150-ամյակը:

Միֆայել Նալբանդյանը ետմահու մեծարվում է Հայաստանում և ողջ Սովետական Միության մեջ: Այսօր նա իր իսկական տեղն է գրավում համամարդկային իդեալների պաշտպան դարձած ռուս հեղափոխական մտածողների կուռ շարքերում:

Նալբանդյանի ժառանգությունը, որն ամմահացել է սերունդների հիշողության մեջ, Մեծ Հոկտեմբերից հետո գիտնականների կողմից հավավվել է, հետազոտվել, վերահրատարակվել և թարգմանվել բազմաթիվ լեզուներով՝ դառնալով շատ ժողովուրդների հագեցած սեփականությունը: Ստեղծվել է գիտության մի նոր դիսցիպլին, որի իրավամբ կրում է սովետական նալբանդյանագիտություն անունը:

Միֆայել Նալբանդյանին վիճակվեց կարևոր պայել, սակայն բողնել պատկանելի գրական-գիտական ժառանգություն և հեղափոխական-դեմոկրատի բյուրեղացած անուն: Մեծ դեմոկրատը նախ պոետ էր, հայ ֆալսական պան-

գիայի հիմնադիրը. նրա «Ազատություն» բացառույց բանաստեղծությունը, որպես սրբագան ավանդ, դրոշ է եղել բոլոր սերունդների հայ հեղափոխականների և մտածողների համար: Մեծ է Մ. Նալբանդյանի դերը հրապարակախոսության, գեղարվեստական գրականության, փիլիսոփայության, տնտեսագիտության բնագավառներում: Իր գործունեության և ստեղծագործության բոլոր մարգերում Մ. Նալբանդյանը նորարար էր և իր հուժկու ձայնով ազատության պայքարի էր կոչում ժողովրդական զանգվածներին, կոչվ հայտարարում կղերական խավարամուլներին, ցարական կառավարությանը և հատկապես սուլթանների ու փաշաների արյունոտ տիրապետություններին:

Հեղափոխական-դեմոկրատ Միֆայել Նալբանդյանը, դուրս գալով ազգային սահմանափակության փակուղուց, անհաշտ պայքար հայտարարեց նացիոնալիստներին, ռասիստներին, որոնք իրենց «մի շիջ խորովածի համար մորթում էին հարեան ժողովուրդների եզր»:

Գաղափարական սկզբունքայնությունը, նպատակասլացությունը, կամֆի անխորտակելի ուժը, անձնականը հասարակականին զոհելու պատրաստականությունը, ազգայինը համամարդկայինին ձուլելու անհրաժեշտության տեսությունը՝ հատկանշում են Միֆայել Նալբանդյանի ամբողջական կերպարը:

Մ. Նալբանդյանը, լինելով արևելահայ, բարձրացավ հատվածային սահմանափակվածությունից և պայքարեց Հայաստանի երկու հատվածների սոցիալ-ֆալսական ազատագրության, ազատ Ռուսաստանի հովանու ներքո միասնական Հայաստան ստեղծելու նշանաբանով: Նա հայ ժողովրդի ազատագրության երաշխիքը տեսնում էր ցարիզմի, սուլթանիզմի և ավստրիական բռնապետության տապալման հետևանքների մեջ և այդ նպատակով հայ ազգային-ազատագրական շարժումները կապում էր Գարիբալդիի ծավալած հակաավստրիական և Ռուսաստանում խմբավող գյուղացիական հեղափոխական շարժումների հետ: Այս գործում նա իր դաշնակիցն էր համարում Չերեքիս-

կուն ու Դոբրոլյուբովի՛ն, Գերցե՛նի՛ն ու Օգարյո-
վի՛ն, Գարիբալդի՛ին ու Մաձձի՛նի՛ն: Մի՛խայել
Նալբանդյանի հավատամբը, սակայն, հեղափո-
խական Ռուսաստանն էր, է՛րա ազատատենչ
զավակները: Նալբանդյանը ռուսական կայս-
րությունում ապրող ինչպես մյուս փոքր ժո-
ղովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի ապա-
գան մարգարեաբար տեսավ ազատ Ռուսաստա-
նի մեջ և մի ամբողջ դարաշրջանի հեռավո-
րությամբ իր միտքը այսպես բանաձևեց.
«Ռուսո՛ր մեջ խմորված ազատությունը համար-
ձակ կարելի է մարդկային ազատություն ան-
վանել... Բանգի ոչ միայն ի՛նքը՛՛ ռուսը կուզե
իր ազատությունը, այլ կհարոզե, թե կհաս-
տան, Ֆիլևանդիա, Փոքր Ռուսիա, Կովկաս,
Վրաստան և Հայաստան պետք է ազատ և
անկախ լինեն... Ռուսո՛ր ազատությունը ընդ-
հանուր մարդկության վերաբերությամբ մեծ
խորհուրդ ունի»: Մի՛խայել Նալբանդյանի մար-
գարեական խոսքերն այսօր իրողություն են
դարձել ոչ միայն երբեմնի ռուսական կայս-
րությունում ապրող ժողովուրդների, այլև հա-
մայն մարդկության համար: Ուստի և Նալբանդ-
յանն այսօր բարձր է գնահատվում ոչ միայն
մեր մեծ հայրենիքում, այլև նրա սահմանե-
րից դուրս:

Թերևս հոբելյանն առիթ է առավել հետա-
գոտելու, առավել մեծարելու հայ ժողովրդի
այդ մեծ մտածողին և նրա օրինակով ու նրա
ժառանգությամբ դաստիարակելու ներկա ու
զալի՛ք սերունդներին:

Այս փոքր ներածությամբ բույլ տվե՛ք
Մ. Նալբանդյանի ծննդյան 150-ամյակին նվիր-
ված Երևանի պետական համալսարանի գիտա-
կան նստաշրջանը հայտարարել բացված:

* *

Մ. Նալբանդյանի գործունեության մի կա-
րևոր կողմն էր լուսաբանում պրոֆ. Հ. Ղա-
զարյանի «Նալբանդյանը և ռուս հեղափոխա-
կան դեմոկրատները» գեկուցումը: Զինակցելով
ռուս մեծ հեղափոխական դեմոկրատներին՝
Զերեխևսկուն, Գերցենի՛ն, Օգարյովի՛ն, Դոբրո-
լյուբովի՛ն, դեռևս ոչ անարխիստ Բակունինի՛ն,
Նալբանդյանը նրանց մարտական շարժերում
անհաշտ, հետևողական պայքար մղեց ցարիզմի
և նորտատիրական կարգերի տապալման հա-
մար: Ամուր կանգնելով ռուսական համաժո-
ղովրդական հեղափոխական պայքարի ավան-
գարդում՝ Նալբանդյանը ինչպես մյուս բոլոր
փոքր ժողովուրդների, այնպես էլ հայ ժողո-
վրդի ազատագրության երաշխիքը տեսավ
ազատ Ռուսաստանի մեջ: Զեկուցողն ընդգծեց,
որ Նալբանդյանը ֆեոդալական հասարակարգի
դեմ հեղափոխական պայքարի դուրս եկավ
այն ժամանակներում, երբ Ռուսաստանում
հասունացել էր հեղափոխական իրադրություն,
երբ Արևմտյան Եվրոպան այնպես էլ

բուրժուական հեղափոխություններն ու ազգա-
յին-ազատագրական շարժումները, երբ հեռա-
վոր Ամերիկայում հաղթանակով էին ավարտ-
վում ֆաղաֆաղական կռիվները: Մեծ դեմո-
կրատի գաղափարական հասունացման գոր-
ծում էական դեր խաղացին Մոսկվայի և Պետեր-
բուրգի համալսարանների ուսանողական շար-
ժումները, առաջադեմ գիտնականներ Ի. Դել-
բովի, Կ. Ռուլյեի, Տ. Իբանովսկու և ուրիշների
դասախոսություններն ու նրանց հետ անձնա-
կան ծանոթությունը: Առավել մեծ էր, սա-
կայն, ռուս վարչապետականների դերը: Գերցենի
օրհնակով Նալբանդյանը կամենում էր «Հյուս-
սիասիայայր» տեղափոխել արտասահման, Փա-
րիզում կամ Լոնդոնում ստեղծել «ազատ հայ-
կական տպարան», ապա և կապեր հաստա-
տել Կոստանդնուպոլսի, Ղվոյունդայի, Արև-
մրտյան Եվրոպայի հայ գաղութների առաջա-
վոր մտավորականների և Ռուսաստանի հայ
դեմոկրատների հետ: Նա հիմնավորապես
նուսումնասիրում է Բելիևսկու և Գերցենի, Չեր-
նիշևսկու և Դոբրոլյուբովի, ինչպես նաև արև-
մրտաեվրոպական ուտոպիստ-սոցիալիստների
երկերը:

Գյուլագիական հարցի հետ Լոնդոնի պրո-
պագանդիստները սերտորեն տնեշում էին ազ-
գային-ազատագրական շարժումները և մաս-
նավորապես կովկասյան ժողովուրդների ազա-
տագրության խնդիրը: Նալբանդյանի՝ նրանցից
ունեցած ակնկալությունները համընկնում էին
ոչ միայն «ազատ տպարանի», այլև «Սովե-
մենիկի» շուրջ համախմբված ռուս-հեղափո-
խականների գաղտնի մտադրություններին, և
այդ շրթայի կարևոր օղակներից էր դառնում
հայ հեղափոխական դեմոկրատիան: Այդ ընդ-
հանուր նպատակը նրան գաղափարականից
բացի գործնականորեն էր կապում Գերցենի՛ն,
Զերեխևսկուն և մյուսներին, որոնք հանձին
Նալբանդյանի տեսնում էին իրենց «վստահե-
լի ու գերազնիվ» զինակցին և միշտ էլ հիաց-
մունքով էին արտահայտվում նրա մասին:

Մ. Նալբանդյանը բանտարկվեց Լոնդոնի
պրոպագանդիստների հետ ունեցած կապերի
«մեղադրանքով» և բաժանեց իր ռուս բարեկամ-
ների նակատագիրը: Հետախնդրության նյութե-
րը, իր՝ Նալբանդյանի, Սեոնո-Սաղովկիչի, Վո-
րոնովի, Օբրուչևի ցուցմունքները, Տուրգենևի
ու Բակունինի նամակները, հայր և որդի Գեր-
ցենիների մեմուարները, Օգարյովի ցավակցա-
կան կոնսպիրացիոն գրագրությունները այսօր
հիմք են տալիս վստահորեն ասելու, որ Նալ-
բանդյանը եղել է Գերցենի և Օգարյովի
գլխավորած «Զեմլյա ի վոլյա» կազմակերպու-
թյան ղեկավար կորիզում: Նալբանդյանը ան-
ձամբ ծանոթ է եղել Զերեխևսկուն: Իր ֆենա-
դատական գործունեությամբ ու գեղարվեստա-
կան երկերով նա կարևոր դեր է խաղացել հայ

գրականության մեջ ռեալիստական ուղղության արմատավորման գործում:

Նալբանդյանը գեներով և արշամբ մարտըն- շեց հայ ժողովրդի պատագրության և առաջ- րերացի համար, նրա փրկությունը տեսավ Ռու- սաստանում ծավալվող հեղափոխական պայ- քարի հետանկարների մեջ և հանուն պատու- րյան զոհվելով՝ իր ժողովրդին պատգամեց հա- վերժ մնալ առաջավոր Ռուսաստանի հետ:

Նալբանդյանի գեղարվեստական ստեղծա- գործությունը բնութագրող գեկուցմամբ հանդես եկավ պրոֆ. Ս. Բազյանը: Նալբանդյանի գե- ղարվեստական ստեղծագործությունը նրա ան- մահ ժառանգության մի բնագավառն է միայն, ուր այնպես շոսյուրեն, նոր հայտնաբերելու և հաստատելու վիրիարի տաղանդով, գեղար- վեստական մեծ ուժով արտացոլվեց փորրկի ու գրոհի այն ժամանակը, որը կենինն ան- վանել է հեղափոխական իրադրությունների շրջան: Նալբանդյանը առանձին շեմությունմբ ու բարձր արվեստով անդրադարձեց հեղա- փոխական իրադրության շունչը, պարթուր, գա- ղափարաբանությունը և, դրանով իսկ, նպաս- տեց հեղափոխական իրադրության զարգացմա- նը, ստեղծելով պատմական այդ մեծ երևույ- քին, ինչպես և հեղափոխական-դեմոկրատա- կան շարժմանը համարժեք բանաստեղծական ու վիպական ժանրերի բարձրարժեք երկեր:

Ձեկուցողն այնուհետև անդրադարձավ Նալբանդյանի գրական-գեղարվեստական հա- յացներին, ցույց տվեց այն նորն ու առաջա- վորը, որ Նալբանդյանն արմատավարեց հայ հասարակական մտքի զարգացման մեջ՝ դառ- նալով բնագրատական ռեալիզմի և մատե- րիալիստական գեղագիտության հիմնադիրը: Սկսելով լուսավորական ռեալիզմով, նա իրեն հատուկ անօրինակ քոլիշով բարձրացավ և նվաճեց բնագրատական ռեալիզմը: Մեծ հե- ղափոխական-դեմոկրատի ատեղծագործական մեթոդը և ուղղությունը ներառում էր օրինա- շափոհեն իրար ձուլված ու ներքափանցված երկու գծեր՝ իրականության ռեալիստական արտացոլումը և հեղափոխական ոգուհետիզ- մը: Մեկով նա մերկացնում ու դատապարտում էր, մյուսով՝ հաստատում իր հասարակական- գեղագիտական իդեալը, իրականության հեղա- շրջման և նորի, կատարյալի հաստատման ու- ղիններ գծում:

Իր դրույքները գեկուցողը հաստատեց Նալ- բանդյանի գեղարվեստական երկերի վերլուծու- րյամբ, ցույց տվեց նրանց գեղարվեստական- գաղափարական արժանիքներն ու ժանրային առանձնահատկությունները:

Ստեղծագործելով գրական երկու հիմնա- կան սեղերով՝ բանաստեղծական ու վիպական, Նալբանդյանը հայտնաբերեց այդ երկու ժան- րերի բազմազան ժանրաձևեր, որոնք արվեստի

հայտնությունը լինելուց բացի, հզոր տաղան- քի դրոշմ ունեն: Դրանք են՝ երգիծական բա- նաստեղծություն, խոհական-փիլիսոփայական, բնարական բանաստեղծություն ու պոեմ, ֆա- ղամական-հեղափոխական բնաբերություն, վեպ, երգիծալիպակ, պատմվածք, ֆեյհետոն, ակնարկ, հիշատակարան՝ վիպական ժանրի ա- սպարեզում: Այդ ժանրաձևերի մշակման ըն- քացում նա բերում էր գեղարվեստական նոր կոնցեպցիա, նոր լեզու և ոճ, նոր պատ- կերահամակարգ, նոր սյուժեներ, նոր թեմա- տիկա, բանաստեղծական ու վիպական արվես- տի այնպիսի տիպաբանական ու գեղագիտա- կան գծեր, այնպիսի մեթոդաբանություն ու գրական ուղղություն, որոնք նրան դարձնում են համանվիրապետական և համառուսական գրա- կան առաջընթացին զուգահեռ արվեստագետ ու մտածող, այդ առաջընթացի լավագույն ավանդների ու միտումների կրող:

«Մ. Նալբանդյանի մատերիալիզմը» գեկու- ցումով հանդես եկավ պրոֆ. Հ. Գաբրիելյանը: Հայ տեսական մտքին Նալբանդյանի մատուցած մեծագույն ծառայությունը մատերիալիստական ուղղության հիմնադրումն է հայ փիլիսոփայու- րյան հոգևոր մշակույթի ասպարեզում: Ձեկու- ցողը բնեկելով մեծ մտածողի փիլիսոփայա- կան երկերը՝ անհրաժեշտ մեթոդաբանություն ուն- կողորհներին ներկայացրեց Նալբանդյանի մա- տերիալիզմի բնույթը առանձնահատկությունները: Իդեալիզմի դեմ պայքարելիս Նալբանդյանը մա- տերիալիզմը կապել է դիալեկտիկայի հետ, հա- կառակ Ֆոյերբախի, որը, ինչպես հայտնի է, մերժելով Հեգելի իդեալիզմը, նույն կերպ վար- վեց նաև նրա դիալեկտիկայի հետ: Նալբանդյա- նը հրաժարվելով Հեգելի իդեալիզմից՝ պահպա- նում ու զարգացնում է նրա դիալեկտիկան: Նա աշխատում է իրեն զբուղեցնող հարցերը լուծել դիալեկտիկայի դիրքերից: Այս տեսակետից գե- կուցողը ընդգծեց հատկապես ազգային հարցի Նալբանդյանական ըմբռնումը:

Պրոֆ. Հ. Գաբրիելյանը անդրադառնալով տնտեսական հարցի Նալբանդյանական ըմբռնմա- նը՝ վերլուծության ենթարկեց նրա տեսակետը: Ըստ Նալբանդյանի, աշխատավոր մարդու վի- նակը իրապես բարվոքելու, նրան քաղցից ու բռնությունից փրկելու համար անհրաժեշտ է սոցիալական մեծ հեղաշրջում, անհրաժեշտ է աշխատավորին տալ այն, ինչ մարդու գոյության, բարեկեցության մշտական աղբյուրն է: Խնդրի այս ըմբռնումով Նալբանդյանը հանդես է գալիս որպես հեղափոխական-դեմոկրատ՝ առաջադրե- լով առաջին հերթին տնտեսական հավասարու- րյան հարցը: Ազատության, հավասարության և եղբայրության լրգումներն արժեք կունենան միայն այն ժամանակ, երբ վերջ կտրվի ֆեո- ղալիզմին: Այս տեսակետը գեկուցողը համարեց Նալբանդյանի հասարակագիտական հայացքների

հիմնակետը: Յեռոյալիզմը վերացնելու հիմնական միջոցը Նալբանդյանը համարում էր մասնավոր սեփականություն վերացումը: Նալբանդյանի պայքարը սամեակար սեփականության ու դրա վրա հիմնված սոցիալական անհավասարության դեմ՝ նրան հանգեցրեց ուտոպիստական սոցիալիզմին, իսկ Ֆոյերբախը մնաց բուրժուական լիբերալիզմի դիրքերի վրա: Այսպիսով, ֆոյերբախյան Նալբանդյանը փոխոտոպիստիան հիմնական հարցերում Ֆոյերբախից առաջ անցնելով՝ հող պատրաստեց մարքսիզմի տարածման համար հայ իրականության մեջ:

«Մ. Նալբանդյանը գրական *հենդալտ*» գեկուցման մեջ դրց. *ժ. Քալանթարյանը* անդրադարձավ մեծ մտածողի հենդալտական հայացքներին: Նա Նալբանդյանին բնորոշեց որպես հայ պրոֆեսիոնալ հենդալտության հիմնադիրներից մեկը, որ հսկայական ավանդ է ներմուծել հայ իրականության մեջ այդ գիտության արմատավորման գործում: Նա հանդես է եկել թե՛ իբրև գրականության պատմաբան և թե՛ իբրև տեսաբան ու հենդալտ, հետևողականորեն զբաղվել արձակի, դրամատուրգիայի, պոեզիայի ու բարձրագույն հարցերով:

Նալբանդյանի գեղագիտությունը պարզելու համար գեկուցողն առանձնացրեց էյակետային նշանակություն ունեցող երկու հարց՝ գրականության հարաբերությունը կյանքին և ապա գրականության զարգացման ներքին օրինաչափությունները: Այդ հարցերը, ասաց գեկուցողը, Նալբանդյանը լուծում է մատերիալիստորեն՝ գրականությունը դիտելով իբրև ժամանակի ու միջավայրի, ժողովրդի ֆաղափական կյանքի ու կենցաղի արդյունք: Թե՛ լուսավորիչ և թե՛ հեղափոխական Նալբանդյանը գրականությանը վերագրում էր ազդեցության մեծ ուժ, փորձում գրականության միջոցով ազդել ժողովրդի ոչ թե ականջի, այլ սրտի վրա: Կյանք-գրականության հարաբերության մեջ որպես մատերիալիստ նա առավելություն է տալիս կյանքին և հանդես գալիս իբրև գրականության ռեալիստական ուղղության պաշտպան: Նա գնահատում է հայ գրականության անցած ճանապարհը և դեռում է XIX դարակեսին համապատասխան, աշխարհիկ թեմաներով, ժամանակակից աշխարհաբար լեզվով գրականություն ստեղծելու խնդիրը: Այդ գրականության միջոցով էր նա կամենում կրթել ժողովրդին, լուսավորել, տոգորել նորագույն գաղափարներով: Նրա համոզմամբ գրականության միջոցով անհրաժեշտ է մատուցույց անել կյանքի արատները, հոռի կողմերը, արմատախիլ անել դրանք և ժողովրդի գիտակցության մեջ պատվաստել նորը:

Նալբանդյանը առաջ է փառում ցանկալի գաղափարների արտացոլման գեղարվեստականության իր սկզբունքները, որոնք վերաբում են հենդալտական ռեալիզմի ամբողջական տեսու-

րյան: Նալբանդյան-հենդալտի համար բնորոշը առողջ, սրտի հայացքն է, սկզբունքայնությունը և անգիշտակալությունը, ազնիվ մտահոգությունները գալիքի հանդես, ֆաղափական ու հասարակական բարձր իդեալների հետևողական պաշտպանությունը: Քենդալտության բնագավառում նրա առաջ փառած շատ սկզբունքներ այսօր էլ ունեն արդիական հնչողություն:

Մ. Նալբանդյանը իր երկերում բազմիցս անդրադարձել է ազգային հարցին: Այս հարցը հեղափոխական-դեմոկրատ մտածողների առաջ փառած խնդիրների մեջ առաջնահերթ տեղ էր գրավում: Ազգային հարցի նկատմամբ Նալբանդյանի մեծ հետաքրքրությունը բացատրվում է նաև ամենից առաջ XIX դարում բուրժուա-ապրանքային հարաբերությունների և այդ հիմքի վրա առաջացած հայ ազգային-ազատագրական շարժումների բուռն զարգացմամբ: Այդ շարժումները համընկնում են գյուղացիական-հեղափոխական իրադրության, ինչպես նաև ազգային-ազատագրական շարժումների հետ՝ ծավալված կենսատանում, Բալկանյան երկրներում, Իտալիայում և այլուր: Ազգի և ազգային հարցի նալբանդյանական բնութագրերը, անշուշտ, ունեցել են իրենց էվոլյուցիան, ասաց դրց. *Ն. Գասպարյանը* իր գեկուցման մեջ, մեր համոզմունքով, մեծ մտածողի հայացքները գնահատելիս պետք է էյակետ ունենալ նրա հասուն շրջանի աշխատությունները: Մ. Նալբանդյանի համար այդ շրջանը վերաբերում է 1850-ական թթ. վերջին և 1860-ական թթ. սկզբներին:

Նրա այդ շրջանի բնութագրերը հասկանալու համար պետք է նկատի ունենալ երկու հանգամանք: Առաջինը այն է, որ նա տարբերում է ազգ և մարդ հասկացությունները: Ըստ նրա ազգը, ի տարբերություն մարդու, կազմավորվել է պատմականորեն և հետագայում վերանալու է: Երկրորդ. ըստ Մ. Նալբանդյանի ազգը դա աշխատավոր ժողովուրդն է: Նա է ներկայացնում ազգը, նա է պահպանում ու զարգացնում ազգային լեզուն, ազգային հոգևոր մշակույթը, սովորություններն ու բարքերը, նա է ազգային հարստության ու բարիքները ստեղծողը: Այդ պատճառով էլ, ըստ Նալբանդյանի, ազգային շահերը հասարակ ժողովրդի շահերն են: Ազգի «բարձր» խավերը՝ կալվածատերերը, վանառականները, հոգևորականությունը, «մեծատունն», ամեն ռապ կարող են անտեսել, սուռանալ ազգի շահերը: Մ. Նալբանդյանը ազգի մեջ տեսնում է երկու դաս՝ ազգային վերնախավը (հարստահարողների, շահագործողների, ճեշողների փոքրամասնությունն), որին հատուկ է ազգային էգոիզմը և կոսմոպոլիտիզմը, և ազգային մեծամասնությունը՝ ամեն բարիքի ստեղծողը, ազգի պահպանողն ու մյուս ազգերի շահերը հարգողը: Հեղափոխական դեմոկրատիզմի փայլուն ներկայացուցիչը, Չերնիշևսկու,

Գեղեցեհի մարտական զինակիցը դիակելանիկ ու մատերիալիստ մտածող էր: Այդ դիբեբից էլ նա մտաեւում էր ազգին ու ազգային հարցին: Հանդես գալով գաղութատիրութեան և նվաճողական քաղաքականութեան դեմ, Մ. Նալբանդյանը պաշտպանում էր ազգային ազատագրական շարժումները, որովհետև այդ շարժումների էությունը նա համարում էր հասարակ ժողովրդի, աշխատավորության պայքարը ընդդէմ շահագործման և ամեն տեսակի ճնշումների: Հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումները Մ. Նալբանդյանը սերտորեն կապում էր ռուս ժողովրդի ազատագրական պայքարի հետ:

Մ. Նալբանդյանը նաև եռանդուն հասարակական-քաղաքական գործիչ էր, իր ժողովրդի շահերով ապրող, նրա բարօրութեան համար մարտնչող ազնիվ քաղաքացի: Աճա ինչու 1860 թ. հուլիսի 15-ին նոր Նախիջևանի հասարակությանը ընդհանուր ժողովը հենց Նալբանդյանին ընտրեց իր լիազոր-ներկայացուցիչը՝ նրան վստահելով հնդկահայ հարուստների բոլորած կտակների պատասխանատու գործը: Նալբանդյանի հնդկական ուղևորության մասին գեկուցեց դոց. *Ռ. Աբրահամյանը*: Առաջինը Միխայել Նալբանդյանն էր, ասաց նա, որ հանգամանորեն ուսումնասիրելով կտակների հետ կապված գործը, 1859 թվին հանդիմանական մի հոդվածով հանդես եկավ «Հյուսիսափայլում» և կոչարեց զբաղվել կորստյան եզրին հասած գումարներով և նրան էլ հետագայում վտանգվեց այդ դժվարին գործը: Ժամանակակիցների համոզմամբ Նալբանդյանը հոչակատար ազգասեր էր, որին անհաշիւմ էին նաև Հնդկաստանում: Նրան իր գիտությունն ու նորարարությունը պիտի լինեին առաջնորդ և ուղեկից. «նա ոչ խոսելու ժամանակ քարգմանչի կարիք կունենար, ոչ գրելու ժամանակ՝ օրենսգրիի, ոչ վիճաբանելու ժամանակ՝ օրենսգետի: 1860 թ. հոյեմբերին, բազմաթիվ դժվարություններ հաղթահարելով, նա հասնում է Պոլիս, ուր նրա փաստաթղթերը պետք է հաստատեին տեղի անգլիական և ռուսական դեսպանները: Այստեղից էլ ստիպված մեկնում է Լոնդոն՝ Անգլիայի արտաքին գործերի մինիստրությունում իր փաստաթղթերը վավերացնելու, առանց որի դրանք Կալկաթայում կհամարվեին անօրինական:

Հնդկաստանում Նալբանդյանին լավ են ընդունում տեղի հայերը, մասնավորապես Հարություն Աբգարը, որի աջակցությամբ էլ նա կարողանում է Կալկաթայի քաղաքապետարանի խորհրդի արմինիստրատոր Չարլզ Հազից դատարանի միջոցով ստանալ Մասեն Բարաջանյանի կտակագումարը՝ 60000 ռուբլի: Չնայած օտարության դժնդակ ծանրությանը, դատական քաջշնչով, որ քամել է նրա ուժերը, Նալբանդյանը չի ընկճվում և բոլոր հեռավոր միջոցները գործադրում է ստանալու նաև Կաթերինե Խո-

ջամայանի (21000 ռուբլի), Հակոբ Շիլայանի (50000 ռուբլի), Սարգիս Մատուր Աղավելյանի (250000 ռուբլի) գումարները, որոնք այդ մեծահարուստները կտակել էին նոր Նախիջևանի և Գրիգորիապոլի իրենց հայրենակիցներին:

Կալկաթայում գտնված ժամանակ Մ. Նալբանդյանն զբաղվում է ոչ միայն դատական գործը հաղող գլուխ բերելու և հայկական գաղթօջախի առօրյա հարցերով: Նա ուշադիր ուսումնասիրում է նաև բուն հնդկական կյանքը, հնդկական աշխատավոր ժողովրդի սոցիալ-տնտեսական և իրավական ծանր ու անմխիթար վիճակը:

Օգտվելով Նալբանդյանի ներկայությունից՝ նրա գաղափարական հակառակորդները գրգռաշակյալ լուրեր են տարածում, թե իբր նա յուրացրել է բերած գումարի կեսը, թե նրա եղբայրը հարստացել է Հնդկաստանից բերված գումարներով և այլն: Դատական նիստի անգլերեն վավերացված արձանագրությունը հնարավորություն է տալիս վերջնականապես լուծելու այդ հարցը և Նալբանդյանին ազատելու շարժանեց գրգռություններից:

Մ. Նալբանդյանի հնդկական ուղևորությունը տե՛սց երկու տարի: Կատարելով իր քաղաքացիական և հայրենասիրական պարտքը՝ մեծ ջանքերի ջնոհիվ նա կարողացավ հաղթահարել անգլիական իշխանությունների և Կալկաթայի դատարանների հարուցած դժվարությունները, մեկ-մեկակ հաղթող դուրս գալ, շահել դատը և ստացած գումարը մինչև վերջին դանկը հանձնել նոր Նախիջևանի հասարակությանը:

«Պետության հարցերը Նալբանդյանի աշխատություններում» գեկուցման մեջ իրավագիտության թեկնածու Հ. Հովսեփյանը մտանշնեց, որ ցայսօր խորությամբ չեն ուսումնասիրվել Նալբանդյանի երկերը իրավական տեսանկյունից, և դա այն դեպքում, երբ հայ իրականության մեջ նա առաջինը կանգնեց պետության և իրավունքի գիտական տեսության մշակման ակունքի մոտ: Ինչպես բոլոր ժողովուրդների, այնպես էլ հայ իրականության մեջ կղերա-ֆեոդալական և բուրժուական գաղափարախոսները, արտահայտելով իրենց դասակարգերի իդձերն ու ցանկությունները, ամեն կերպ աշխատում էին ստեղծել պետության և ժողովրդի միասնության պատրանք: Նման կեղծարարության դեմ իր ռուս բարեկամների հետ միասին հանդես եկավ նաև Նալբանդյանը: Պետությունը հարուստներն են, շինովիկները, ասում էր նա, իսկ հասարակ ժողովուրդը տակավին հավատում է, թե պետությունը ազգն է, որի հետևանքով էլ նա լուսկյաց գնում է իր կառավարության Էտեից: Նման եզրակացությունները խոսում են այն մասին, որ Նալբանդյանը տնտեսական խնդիրը և նրա լուծումը չի կարում պետության հարցից: Այնուհետև անդրադառնալով «Չեզելը և ճորս ժամա-

նակը» աշխատության մեջ մեծ հեղափոխական-դեմոկրատի պետությանը վերաբերող հարցերին՝ զեկուցողը փաստերի հիման վրա բնութագրեց Նալբանդյանի առաջադեմ հայացքները ժամանակի պրոբլեմային հարցերից մեկի վերաբերյալ: Նա նշեց, որ Նալբանդյանը բջնամի էր բռնապետությանը՝ ո՛ր երկրում և ինչպիսի՛ կերպարանում էլ այն հանդես գար: Նա կոչ էր անում ոչնչացնել բռնակալական պետական կարգը, եթե նույնիսկ նրան անվանում են «լուսավորյալ միապետություն»: Այս հարցում Նալբանդյանը հանդես եկավ նաև հայ կղերաֆեոդալական և լիբերալ-բուրժուական մտածողների դեմ, որոնք պրոպագանդում էին իր ժամանակին լայն տարածում ստացած այդ գաղափարը: Մ. Նալբանդյանը «կատարյալ» պետություն համարում է այն պետությունը, շարունակում է զեկուցողը, որը կգտնվի ժողովրդի ձեռքում հողի հետ միասին: Այդ պատճառով էլ նա հողազուրկ աշխատավորներին կոչ էր անում գյուղացիական հեղափոխության միջոցով ոչնչացնել գոյություն ունեցող պետությունները՝ իրենց բոլոր ձևերով հանդերձ և հաստատել գյուղացիական դեմոկրատական հանրապետություն, որը կծառայի ժողովրդի շահերին, կարտահայտի նրա

կամքը: Պետության մասին Նալբանդյանի հայացքները նոր էջ բացեցին հայ ֆադաֆական և իրավական մտքի պատմության մեջ: Դրանք նետագայում զարգացրին Ստ. Շահումյանը, Բ. Կնունդյանցը, Ալ. Մյասնիկյանը և մյուս հայ լեհիկյանները:

Նոյեմբերի 14-ին տեղի ունեցած հանդիսավոր նիստում հայ մեծ հեղափոխական դեմոկրատի մասին զեկուցումով հանդես եկավ ՀՄՄԳՄ ԲԱ քղթակից անդամ պրոֆ. Մ. Մկրտչյանը (զեկուցումը տպագրված է մեր հանդեսի այս համարում):

Միտյայե Նալբանդյանի ծննդյան 150-ամյակին նվիրված հանդիսություններ տեղի ունեցան նաև Մոսկվայում, Լենինգրադում, Դոնի Ռոստովում և մեր Միության այլ ֆադաֆներում: Մարդկության բարօրության և լուսավոր ապագայի համար մղված պայքարում զոհված հեղափոխական-դեմոկրատի մեծարումը վերածվեց ժողովուրդների բարեկամության վառ ցույցի:

Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ
Լ. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ա. ԱՄԻՐԲԵԿՅԱՆ
Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՅ ԵՎ ՌՈՒՍ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՆ ԵՎԻՐՎԱԾ ՀԱՄԱՏԵՂ ԳԻՏԱԿԱՆ ՆՍԱՇՈՐՁԱՆ

Երևանի պետական համալսարանը ՍՍՀՄ ԳԱ ռուս գրականության ինստիտուտի (Պուշկինյան տուն) ռուս հին գրականության բաժանմունքի հետ համատեղ կազմակերպեց ռուս հին գրականության ընթերցումներ՝ նվիրված Արևելյան Հայաստանը Ռուսաստանի հետ միանալու 150-ամյակին: Երևանի համալսարանում ընթերցումները տեղի ունեցան ապրիլի 10-ից 12-ը:

«Ռուս միջնադարյան գրականության գեղարվեստական առանձնահատկությունները» զեկուցումով հանդես եկավ հանրահայտ գիտնական, միջնադարի պատմաբան, ռուս հին գրականության վերաբերյալ բազմաթիվ աշխատությունների հեղինակ, ակադեմիկոս Գ. Ս. Լիխաչովը: Նա ընդգծեց, որ ժողովուրդներին մոտեցնում է այն անհատականը, ինքնատիպը, որը բնորոշ է ավանդույթներով հարուստ յուրաքանչյուր մշակույթի: Հին ռուս գրականության ինքնատիպությունը բնութագրելիս Լիխաչովը ֆենեց հին ռուս գրականության միասնականության հարցը: Այդ միասնականության ապացույցն է այն, որ հին ռուս գրականության առանձնահատկությունները պահպանվել են նրա զարգացման ողջ ընթացքում. նրա բոլոր հուշարձանների միջև գոյություն ունի անխզե-

լի կապ, յուրաքանչյուր ստեղծագործող ձրգտում է յուրացնել նախորդի զարգացման փորձը: Սրանով է պայմանավորված հին ռուս գրականության ուրիշ առանձնահատկություններն Գ. Լիխաչովը կանգ առավ ռուս հին գրականության ուրիշ աղանձնահատկությունների վրա (անաեունություն, հանդիսակարգություն և այլն):

Բանասիրական գիտ. դոկտոր Օ. Տվորոգովի զեկուցումը նվիրված էր Հին Ռուսիայի թարգմանչական գրականության պրոբլեմներին ուսումնասիրությանը: Թարգմանչական գրականությունը մեծ դեր է խաղացել սեփական գրականության ձևավորման գործում, իսկ պատմական տարեգրությունների թարգմանությունները սերտորեն կապված են ռուսական տարեգրության հետ: Չեկուցողը հանգամանորեն կանգ առավ թարգմանչական գրականության ուսումնասիրության արդիական պրոբլեմների վրա (հանրային բաղադրիչների որոշում, թվագրության հարցեր, հուշարձանի լեզվական առանձնահատկություններ, կապը կոնկրետ պատմա-մշակութային իրավիճակի հետ և այլն):

Բանասիրական գիտ. քնննածու Գ. Պրոխորովի զեկուցման մեջ շոշափվեցին եվրոպայի պատմության ամենահետադեմ շրջաններից մեկի՝ վաղ վերածննդի ուսումնասիրության պրոբ-